ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 3 - Լ

«28» 02 2024 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 14-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, 34-րդ հոդվածի 1-ին ու 2-րդ մասերով և Ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 5-Լ հրամանով հաստատված ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության կանոնադրության 22-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի 2023 թվականի դեկտեմբերի 13-ի «ՆԳՆ փրկարար ծառայության 2024 թվականի աշխատանքային պլանը հաստատելու մասին» թիվ 14-Լ հրամանի (այսուհետ՝ Պլան) հավելվածի 1.2.2 կետում «ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության զորահավաքային ծավալման կազմակերպումը և իրականացումը» բառերը փոխարինել «ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության

համապատասխան աշխատանքային ռեժիմի փոխադրումը» բառերով, 1.2.8 կետում «ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության զորահավաքային ծավալման կազմակերպումը և իրականացումը» բառերը փոխարինել «ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության համապատասխան աշխատանքային ռեժիմի փոխադրումը» բառերով:

2. Ուժը կորցրած ճանաչել Պլանի հավելվածի 2.3 և 2.4 կետերը:
3. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Փ/Ծ ԳՆԴԱՊԵՏ **հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ28.02.2024թ.** **Կ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ**